# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/5

ք. Երևան «25» « 12 » 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու»), մի կողմից և «Ագաթ-777» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կապալառու»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 25.10.2019թ.-ին կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով «Ագաթ-777» ՍՊԸ-ի 20.12.2019թ.-ի գրավոր առաջարկությունը, Կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսել 8000000 (ութ միլիոն) ՀՀ դրամ կանխավճար և կանխվճարի գումարի չափով շինարարական աշխատանքների կատարումը երկարաձգել 30 օրացույցային օրով, սահմանել մինչև 25.01.2020թ.-ը:

1.2 «Կապալառու»-ն պարտավորվում է մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 27-ը «Պատվիրատու»-ին ներկայացնել կանխավճարի չափով բանկային երաշխիք:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/5 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն

ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011029148

ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն

Ա.Ղազարյան

________________

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ագաթ-777» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան, Շիրակի փողոցի 4

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000285850100

ՀՎՀՀ 01807983

Տնօրեն

Դ.Եսայան

________________

/ստորագրություն/

Կ.Տ